

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2-րդ մասով օտարերկրյա իրավաբանական անձանց՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 11-րդ բաժնի 1-ին կետով սահմանված լիցենզավորման ենթակա փոստային կապի գործունեության թույլտվություն ստանալու հետ կապված հարաբերությունները:

2. Փոստային կապի գործունեության թույլտվությունը տրամադրում է փոստային կապի բնագավառի լիցենզավորող մարմինը:

3. Լիցենզավորող մարմինն օտարերկրյա իրավաբանական անձանց թույլտվությանը կից տրամադրում է նաև ներդիրներ՝ համաձայն N 3 ձևի, ըստ գործունեության հետևյալ ոլորտների (տեսակի)՝

1) փոստային կապի ծառայությունների գործունեություն.

2) սուբհանդակային կապի ծառայությունների գործունեություն:

4. Փոստային կապի գործունեության թույլտվություն ստացած օտարերկրյա իրավաբանական անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 3-րդ կետով սահմանված ոլորտներում կամ ոլորտներից որևէ մեկում, եթե տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան ստացել են փոստային կապի գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթուղթ և Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի բնագավառի լիցենզավորող մարմնի կողմից տրված թույլտվություն և ներդիր:

5. Թույլտվություն ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, օտարերկրյա իրավաբանական անձի կողմից կարող են ներկայացվել անձամբ կամ փոստով:

2. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի գործունեություն իրականացնող օտարերկրյա իրավաբանական անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) օտարերկրյա իրավաբանական անձի կողմից կնքված և հաստատված հայտը՝ համաձայն N 1 ձևի, նշելով իրավաբանական անձի անվանումն ու կազմակերպչիրավական ձևը, երկիրը, գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման համարը, հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեն.

2) օտարերկրյա իրավաբանական անձի՝ տվյալ պետության օրենսդրության համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը և կանոնադրության պատճենը.

3) թույլտվություն տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով: Օտարերկրյա իրավաբանական անձն օրենքով սահմանված թույլտվության պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլտվության տրամադրման հայտը բավարարելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7. Լիազոր մարմինը հայտը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշում:

8. Թույլտվության հայտը բավարարելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցվում է հայտատուին և առաջարկվում 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել օրենքով սահմանված պետական տուրքը:

9. Թույլտվություն տրամադրելու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4.1-ին, 5-րդ կետերով սահմանված հիմքերով:

10. Օրենքով սահմանված պետական տուրքի վճարման մասին հավաստիանալուց հետո լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ տրամադրում է փոստային կապի գործունեության իրականացման թույլտվություն՝ համաձայն N 2 ձևի: Թույլտվությունը տրամադրվում է անժամկետ: Թույլտվությունը տրամադրվում է առձեռն:

11. Թույլտվությունը վերաձևակերպվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

12. Թույլտվության գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

13. Տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու համար թույլտվություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձը ներկայացնում է N 4 ձևով հաստատված հայտ:

4. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

14. Սույն կարգով սահմանված թույլտվություն ստացած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում, ինչպես նաև լիազոր մարմինը թույլտվություն տալու, դրա վերաձևակերպման, կասեցման, դադարեցման կամ վերականգնման մասին իրենց որոշումների պատճենները դրանք ընդունելու օրվանից՝ 3 օրվա ընթացքում, հրապարակման համար ուղարկում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացնող մարմին:

15. Լիազոր մարմինը թույլտվության գործողությունը դադարեցնելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների պատճենները դրանք ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 օրվա ընթացքում, հրապարակման համար ուղարկում են նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացնող մարմին:

Ձև N 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, երկիրը, հարկ վճարողի հաշվառման համարը,
պետական գրանցման համարը)

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ տրամադրել փոստային կապի գործունեության թույլտվություն՝ ստորև
ներկայացվող ոլորտում գործունեություն իրականացնելու համար

(ոլորտը, որի համար տրամադրվելու է գործունեություն իրականացնելու
թույլտվության ներդիր)

Հայտին կցվում են՝

1) սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը և վերոնշյալ
ոլորտում գործունեության մատուցման (իրականացման) կանոնները (փոստային կապի
ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների)։

ԴԻՄՈՂ _____

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(թույլտվության համարը)

Տրված է _____

(թույլտվության տալու օրը, ամիսը, տարեթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը)

(օտարերկրյա իրավաբանական անձի՝ տվյալ պետության օրենսդրությամբ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի սերիան, համարը)

Գործողության ժամկետը՝ անժամկետ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարար

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ Ն Ե Ր Դ Ի Ր

(թույլտվության և ներդիրի համարները)

(օտարերկրյա իրավաբանական անձի անվանումը)

(գործունեության ոլորտը)

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարար

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ներդիրը վավերական է թույլտվության առկայության դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(իրավաբանական անձի անվանումը ու գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Հ Ա Յ Տ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ ուժը կորցրած ճանաչել փոստային կապի գործունեության թույլտվությունը:

Հայտին կցվում է թույլտվության բնօրինակի պատկերամուտով անցկացված տարբերակը:

ԴԻՄՈՂ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ